Մեզ էլ արժանի տես նոցա խմբակին.
Տէր, դու ես լոյս ու ճար, տար Երուսաղէմ։
5 Գոհութիւն քեզ, Տէր Յիսուս, ոչ բերիր սուրբ Երուսաղէմ
Սրտիս մէջն խոց չը մնաց, աչք տեսի որքան սաղ եմ
Զարշաբանացդ նայելով, լամ արտասուք մաղ եմ
Ո՛վ սուրբ Յակոբ, ինչ մխիթարեա շուտուց եմ յայտնել, ես կաղ եմ,
Դովաբանելուդ թիւ չեմ ճարում, ինայիր խելքս չը շաղեմ,
Մարմնով ատոից փափագս առայ, մեր տունը տար
Երուսաղէմ։

ԵԴԵՍԻԱ

Եդեսիոյ Կրօնական, Քաղաքական, Ուսումնական և Թաղական ժողովոց ատենապետաց և ատենադպրաց նոյնագիր ստորագրութեամբ անթուական և պաշտօնական կնիք չը կրող նամակ մը եկած էր Սրբազան պատրիարքին, որով անցեալ տարւոյ Դեկտեմբեր ամսոյ Սիօնի մէջ հրատարակուած նամակի մը դէմ կը բողոքեն. սոյն բողոքոյ նամակն ստորագրած էր նոյնպէս տեղւոյն Իտարէի ժողովոյ հայ անդամն։ Հարկ չը համարեցինք նամակն հրատարակել նախ՝ այն պատճառաւ, որ անվաւերական կերպարանք ունէր, երկրորդ՝ որ ուղղակի Սիօնի խմբագրութեան ուղղուած չէր։

Սակայն կը զարմանամք, որ մինչդեռ Սիօնի նամակագիրը իւր ըրած դիտողութեանց և յայտնած ցաւալի իրողութեանց ստուգութեան վերայ ամենեւին անկասկած յայտնի ստորագրութիւն կը դնէ իւր գրածին տակ. իսկ նամակագիր ատենապետը և ատենադպիրք առանց հրատարակուած նամակին պարունակութեան պատասխանելու, ուղղակի Սիօնի դէմ կը յարձակին, որ իբրեւ, անկրօն պոպոխի մը սոպ սոպ խրդոի խօսից հաւոպ ընծայելով շնորհը ոչնչացած է գեղոյն առաջնորդին և էջմիածնոյ վերայ։

Մեք այս մասին կը հրաւիրեմք նամակագիրներն, որ Սիօնի նոյն համարն կրկին անգամ կարդան ուշի ուշով և մանաւանդ յաջորդ ամսատետրի մէջի շարունակութիւնը, (զոր կարծեմք բնաւ տեսած չեն). եթէ նոյա մէջ իրօք սոպ սոպ խրդոի խօսքեր կան, սը-տութեանց մի առ մի պատասխանեն, զոր Սիօն գոհունակութեամբ պիտի հրատարակէ ի սէր ճշմարտութեան։

Մինչդեռ Սիօնի նամակագիրը Արեւեան Յակոբ վարժապետը չը գովէլէն զատ, նորա ազգամէնաս արարքներն պարսաւած էր. սակայն նամակագիր ատենապետք և ատենադպիրք այնչափ կրիւք կարդացած են Սիօնը՝ որ բնաւ չեն հասկացած և կրից մարգարէութեամբ գուշակած են, որ Սիօնի նամակագիրը կամ Արեւեանն է և կամ նորա նման լարաճաի անձ մը։ Ուստի կրկին կը հրաւիրեմք, որ կարդան Սիօնը առանց կրքի և մեծ ուշադրութիւն, եթէ ունին պատասխան մը թող ղրկեն մեզ, բայց ոչ անձնական կնիքով և ոչ նոյնագիր ստորագրութեամբ, այլ պաշտօնական կնիքներով և յատուկ ստորագրութեամբ։

Մեք արդէն Սիօնի նամակագրի գրածէն առաջ Ուլնեցի Դաւիթ վարդապետի մասին Պոլսոյ լրագրաց մէջ շատ ցաւալի լուրեր կարդացած էինք. կը ցաւէինք Դաւիթ վարդապետի

digitised by A.R.A.R.@

բռնած ընթացքից վերայ և աւելի մեր սրտի ցաւէն շարժեալ հրատարակեցինք յիշեալ նամակն յուղղութիւն և ի զգաստութիւն Դաւիթ վարդապետին և իւր նմանեաց։

ՀԷՔ ՊԱՆԴՈՒԽՏՆ

Ո՞ւր հէք պանդուխտն կարէ գտնել թախծեալ սրտին խուն մ՝ սփոփանք
Անդ՝ ուր եղբարց յիւր լսելիս հնչեն սիրոյ բիւր արձագանք.
Ո՞ւր պանդխտին քաղցրը թուի անագորոյն մահ տարաժամ
Անդ՝ ուր խփեն նորա աչեր իւր սիրելիք, կամ բարեկամ։

Երբ հէք պանդուխտն նստի կուլայ իւր չարաղէտ դիպաց վերայ
Երջանիկ ոք կը զարմանայ և հարցանէ թէ էր կուլայ.
Երբ պատճառը կը բացատրեն, մեծ ապշութեամբ կը գոչէ նա
Ճշմարիտ է, այդքան խիստ է 'ի հայրենեաց գոլ տարակայ։

Ապուշ. մարդ ոք որ զգացմունք չունի երբէք իւր հայրենեաց
Նա չէ 'ի շարքս մարդկային, այն զգայուն վեհ էակաց.
Նա յարաժամ է ենթակայ նոցա արժան նախատանաց
Կ'ատէ զանի, ապահով եմ, և ամենուս մեր Հայրն Աստուած։

Թող պանդխտին առջև դիզեն ոսկի, արծաթ և շատ ակունք
Թող ամեն ոք զայն հրաւիրեն յուրախութիւն և զեղխ կոչունք.
Սակայն 'ի զուր անտարակոյս կը լինին այս ամեն ճգունք
Նորա աչեր միշտ արտասուաց պիտի լինին աղբերակունք։

Տղայ էի երբ մեկնեցայ ես իմ վայրէս ծննդական
Շատք ինձ ըսին թէ չես կարող ժուժել վշտաց պանդխտական.
Պատանի դու, եթէ կամիս քու բուն բարիքդ և իսկական
Ապրէ միշտ հոն, ուր դու ծնար, Հայ ես, ապրէ 'ի Հայաստան։

Այս խօսքերքն էին խրատ ճշմարտապէս ինձ փրկարար
Սակայն անոնց զօրութիւնն իմանալու չունէի կար.
Այլ այժմ աւաղ, փորձով գիտցայ թէ աշխարհիս ամենայն այր
Երջանիկ չէ, բայց միայն անդ, զոր ծննդեան կոչնմք սուրբ վայր։

Ո՞ր բարեգութ աչն ազատիչ պիտ՝ կարկառի ինձ, Աստուած իմ
Ո՞ր ձայն պիտի յիմ լսելիս հնչէ մեկին թէ ազատ եմ.
Սրանալ թռչիլ 'ի Հայրենիս, ում անձկայրեաց կը փափագիմ
Հայրենիք, ո՜հ, որքան վաղուց քո սուրբ հրոսդ կը տոչորիմ։

Մ. Վ. Ս.

digitised by A.R.A.R.@